

**Վիճակագրական արտադրանք – Ծառայությունների ծավալի ինդեքսներ/ Ծառայությունների ծավալի ինդեքսներ (ամսական/ եռամսյակային), Ծառայությունների ծավալի ինդեքսներն՝ ըստ ծառայությունների տեսակների (ամսական)**

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<i>Կարիքների ձևակերպում</i>		
	1.1 Կարիքների բացահայտում	Ցուցանիշների հավաքման հիմնական նպատակն է տրամադրել օգտագործողներին ամսական, եռամսյակային կտրվածքով տեղեկատվություն ըստ տեսակների ծառայությունների ծավալի ինդեքսների վերաբերյալ: Ցուցանիշները կիրառվում են ծառայությունների բնագավառում ռազմավարության մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	Ցուցանիշները հավաքվում են՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=191">https://www.armstat.am/am/?nid=191</a> հղումը), որն իր հերթին մշակվում է վիճակագրական տեղեկատվության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության օգտագործողների կարծիքների ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նրանց հետ աշխատանքային քննարկումների անցկացման, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության հարցաթերթի» միջոցով (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=131">https://www.armstat.am/am/?nid=131</a> հղումը):
	1.3 Արտադրանքի նպատակների սահմանում	Ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվության (տվյալների) հավաքման, օգտագործման, հրապարակման և պահպանման գործընթացում խստորեն պահպանվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ

		օրենքում վիճակագրական տվյալների գաղտնիությանը վերագրվող դրույթները (տես՝ <a href="http://www.armstat.am/file/doc/99486043.pdf">http://www.armstat.am/file/doc/99486043.pdf</a> հղումը):
	1.4 Հասկացությունների որոշում	Ցուցանիշների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների պահանջարկի առկայությամբ:
	1.5 Տվյալների առկայության ստուգում	Ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքման հիմնական աղբյուր են հանդիսանում ծառայությունների ոլորտում գործող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: Բոլոր տվյալների հավաքումն իրականացվում է վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով՝ համապատասխան տարեկան ու հնգամյա վիճակագրական ծրագրերի:
	1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում	Ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալները ստացվում են վիճակագրական հաշվետվության ձևերով: Մինչ վիճակագրական հաշվետվության ձևերի ընդունումը ՀՀ ՎՊԽ կողմից և ՀՀ արդարադատության նախարարության կողմից դրա պետական գրանցումը, որպես նորմատիվ իրավական ակտ, իրականացվում է դրանցում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգների մասով աշխատանքային քննարկումներ տարբեր շահագրգիռ մարմինների, գիտական կազմակերպությունների, օգտագործողների հետ, ինչպես նաև հաշվի է առնվում միջազգային փորձագետների կարծիքը:
	<i>Նախագծում</i>	
	2.1 Արդյունքների նախագծում	Տվյալների հավաքումը իրականացվում է «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=638">https://www.armstat.am/am/?nid=638</a> հղումը) և «Հնգամյա վիճակագրական ծրագրի մասին» (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=719">https://www.armstat.am/am/?nid=719</a> հղումը) ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն (տես՝ <a href="https://www.arlis.am/documentview.aspx?docID=122973">https://www.arlis.am/documentview.aspx?docID=122973</a> հղումը) և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=191">https://www.armstat.am/am/?nid=191</a> հղումը)

		<p>որոշումների, ինչպես նաև  1. 2020 թվականի մայիսի 11-ի՝ «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 10-Ն և թիվ 13-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին», թիվ 14-Ն որոշման հիման վրա:</p>
	<p>2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում</p>	<p>Ցուցանիշների հավաքման նպատակով կիրառվում է Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրությունը (տե՛ս <a href="https://www.arlis.am/Annexes/5/2020_N1077hav.doc">https://www.arlis.am/Annexes/5/2020_N1077hav.doc</a> հղումը):</p>
	<p>2.3 Տվյալների հավաքման նախագծում</p>	<p>Ռեսպոնդենտները վիճակագրական հաշվետվությունները կարող են ներկայացնել ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Պահպանվում են և՛ թղթային և՛ էլեկտրոնային եղանակով ստացվող հաշվետվությունները:</p> <p>Ծառայությունների ծավալի հաշվարկման համար ամսական պարբերականությամբ հաշվետվություններ հավաքվում են ՀՀ մարզերի և ք. Երևանի այն տնտեսավարող սուբյեկտներից (իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից), որոնց նախորդ տարվա շրջանառությունը գերազանցել է 24 մլն դրամը: Նախորդ տարվա արդյունքներով 24 մլն դրամից պակաս տարեկան շրջանառություն ունենալու դեպքում դադարեցվում է ռեսպոնդենտներից հաշվետվությունների հավաքումը:</p> <p>Հաշվետվությունների հավաքման դադարեցումը չի վերաբերում այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք, գործունեության տեսակով պայմանավորված, չեն կարող համարվել Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ: Վերջիններս ներկայացնում են հաշվետվություն՝ անկախ ծառայությունների տարեկան ծավալի չափից:</p> <p>Իսկ ֆինանսական և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների վերաբերյալ ամսական տեղեկատվությունը ստացվում է վարչական լիազորությունների տիրապետող պետական մարմիններից:</p> <p>Տվյալների բազայի արդիականացման համար հիմք է ծառայում բիզնես ռեգիստրի մշտապես</p>

		<p>արդիականացվող բազան:</p> <p>Բաժնի մշտադիտարկման դաշտում գտնվող տնտեսավարող սուբյեկտների տարեկան բազան համեմատվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական տվյալների բազայի հետ և կատարվում է բացակայող տվյալների համալրում:</p>
	<p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p>	<p>Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է ոլորտի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով: Այդ նպատակով իրականացվում է նախապես հայտնի ծառայությունների ոլորտի տնտեսավարող սուբյեկտների գործունեության փաստի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ բոլոր հնարավոր աղբյուրներից, որին անմիջապես հետևում է այդ տնտեսավարող սուբյեկտների իրազեկումը վիճակագրական դիտարկման դաշտ ընդգրկվելու վերաբերյալ, ապա համապատասխան վիճակագրական տեղեկատվության հավաքումը:</p>
	<p>2.5 Մշակման և վերլուծության նախագծում</p>	<p>Տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշներն ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան կազմակերպությունների հետ կապ հաստատելու միջոցով, իրականացվում են համապատասխան ճշգրտումներ: Ռեստորանների ծառայությունների ոլորտի հաշվառման դաշտի ամբողջականացման ապահովման նպատակով իրականացվում է չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատում:</p>
	<p>2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում</p>	<p>Տեղեկատվության հավաքումից մինչև դրա հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված ռեսպոնդենտներին համապատասխան իրազեկումներով ապահովելու, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ:</p>
<p><i>Կառուցում</i></p>		

	3.1 Հավաքման գործիքի կառուցում	Տեղեկատվության հավաքման իրականացման և դրա համար անհրաժեշտ վիճակագրական հաշվետվության ձևերը և դրանց լրացման հրահանգներն առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տեսքով (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=547">https://www.armstat.am/am/?nid=547</a> հղումը):
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Առկա են ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային փաթեթում (Microsoft Office Access) առկա է մուտքագրված տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ՝ հանրագումարների, տրամաբանական կապերի, կազմակերպությունների գրանցման, նույնականացման ու հարկային կոդերի համապատասխանության և այլ ավտոմատ ստուգումների համակարգեր:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի:
	3.4 Գործընթացների կարգավորում	<p>Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. տեղեկատվության հավաքում,</li> <li>2. թվաբանական և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ,</li> <li>3. տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով (Microsoft Office Access ծրագրային փաթեթ),</li> <li>4. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ,</li> <li>5. տեղեկատվության տարածում՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով տարբերքերում, տեղեկատվական զեկույցներում, վիճակագրական ժողովածուներում, ինչպես նաև տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում պաշտոնական պատասխան գրությունների միջոցով:</li> </ol>

	3.5 Արտադրության համակարգի փորձարկում	Պայմանավորված վիճակագրական հաշվետվության ձևերում ցուցանիշների փոփոխությունների հետ մուտքագրման ծրագրային փաթեթը պարբերաբար ենթարկվում է համապատասխան փոփոխությունների: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ծրագրային փաթեթի թեստավորում:
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	Ցուցանիշների վիճակագրական հաշվետվության ձևերում ընդգրկմանը զուգահեռ իրականացվում է վերջինիս դաշտային փորձաքննություն՝ պարզելու ռեսպոնդենտների կողմից ցուցանիշների տրամադրման հնարավորությունները, ինչպես նաև փորձարկելու դրանց նկատմամբ նրանց ընկալումը:
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Իրականացվում են վիճակագրական հաշվետվության ձևերում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների կազմում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողներին (ռեսպոնդենտներին): Ամփոփվում են տեղեկատվություն ներկայացնողների հետ ցուցանիշների վերաբերյալ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունները:
	<i>Հավաքում</i>	
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	Ընտրանքի իրականացման համար գլխավոր համակցության ձևավորման նպատակով կիրառվում է վիճակագրական բիզնես ռեգիստրը: Ծառայությունների ծավալի հաշվարկման համար ամսական պարբերականությամբ հաշվետվություններ հավաքվում են ՀՀ մարզերի և ք. Երևանի այն տնտեսավարող սուբյեկտներից (իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից), որոնց նախորդ տարվա շրջանառությունը գերազանցել է 24 մլն դրամը: Նախորդ տարվա արդյունքներով 24 մլն դրամից պակաս տարեկան շրջանառություն ունենալու դեպքում դադարեցվում է ռեսպոնդենտներից հաշվետվությունների հավաքումը: Հաշվետվությունների հավաքման դադարեցումը չի վերաբերում այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք, գործունեության տեսակով պայմանավորված, չեն կարող համարվել Միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ: Վերջիններս ներկայացնում են

		<p>հաշվետվություն՝ անկախ ծառայությունների տարեկան ծավալի չափից:</p> <p>Իսկ ֆինանսական և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների վերաբերյալ ամսական տեղեկատվությունը ստացվում է վարչական լիազորությունների տիրապետող պետական մարմիններից:</p> <p>Տվյալների բազայի արդիականացման համար հիմք է ծառայում բիզնես ռեգիստրի մշտապես արդիականացվող բազան:</p> <p>Բաժնի մշտադիտարկման դաշտում գտնվող տնտեսավարող սուբյեկտների տարեկան բազան համեմատվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական տվյալների բազայի հետ և կատարվում է բացակայող տվյալների համալրում:</p>
	<p>4.2 Հավաքման կազմակերպում</p>	<p>Վիճակագրական հաշվետվությունները թղթային տարբերակով ներկայացնող կազմակերպություններից տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա նախապես հայտնի կազմակերպությունների քանակին համապատասխան վիճակագրական հաշվետվության ձևի և ըստ անհրաժեշտության դրա լրացման հրահանգի տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն և բաշխում համապատասխան կազմակերպություններին:</p> <p>Միաժամանակ վիճակագրական հաշվետվության ձևերն ու դրանց լրացման հրահանգները հասանելի են նաև Արմստատի պաշտոնական կայքում (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=547">https://www.armstat.am/am/?nid=547</a> հղումը): Առկա են էլեկտրոնային եղանակով հաշվետվության հավաքման համար անհրաժեշտ ցանցային միջոցներ: Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցներն ունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ վիճակագրական տեղեկատվության հավաքման գործընթացի կազմակերպման համար:</p>
	<p>4.3 Հավաքման իրականացում</p>	<p>Տեղեկատվության հավաքումն իրականացվում է Արմստատի մարզային և Երևան քաղաքի վարչությունների համապատասխան կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից՝ առձեռն, փոստի և էլեկտրոնային համակարգի միջոցներով՝ համաձայն</p>

		20.06.2016թ. ՀՀ ՎՊԽ «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման (տես՝ <a href="https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=122973">https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=122973</a> հղումը):
	4.4 Հավաքման վերջնականացում	Հավաքված տեղեկատվությունը թվաքանական և տրամաբանական ստուգաձևման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունը էլեկտրոնային միջավայր անմիջապես ներմուծելու եղանակով: Թղթային և էլեկտրոնային եղանակով ստացվող հաշվետվությունները էլեկտրոնային միջավայր ներմուծելուց հետո ենթարկվում են արխիվացման՝ միաժամանակ պահպանելով դրանց գաղտնիությանը վերագրվող օրենսդրական պահանջները (տես՝ <a href="https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755">https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755</a> հղումը՝ Գլուխ 7, հոդված 23):
	<i>Մշակում</i>	
	5.1 Տվյալների ինտեգրում	Իրականացվում է Արմստատի Երևան քաղաքի և մարզային վարչություններից ստացվող համապատասխան տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, որի արդյունքում բացառվում են կրկնությունները:
	5.2 Դասակարգում և կողավորում	Իրականացվում է ըստ կազմակերպության գործունեության հիմնական տեսակի ծածկագրման աշխատանքներ՝ համաձայն Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏԴ խմբ. 2), ինչպես նաև մարզային և տարածքային միավորների ծածկագրում՝ համաձայն նախապես սահմանված կարգի:
	5.3 Վերանայում և հաստատում	Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաձևում, ինչպես նաև ոչ ճիշտ ծածկագրված տեղեկատվության համապատասխանեցում նախապես հաստատված դասակարգիչների պահանջներին: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև կազմակերպությունների պետական ռեգիստրում գրանցման, նույնականացման և հարկային մարմնում գրանցման համապատասխան ծածկագրերի վավերացում՝ օգտագործելով Արմստատի կողմից վարվող բիզնես ռեգիստրի և որպես վարչական տեղեկատվության աղբյուր օգտագործվող ՀՀ արդարադատության նախարարության



		իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությունը:
	5.4 Խմբագրում և իմպուլտացիա	Իրականացվում է բացակայող տեղեկատվության համալրում ցուցանիշների նախորդ ժամանակահատվածի վերաբերյալ ներկայացված տվյալներով՝ դրանց վերաբերյալ այլընտրանքային տեղեկատվության բացակայության դեպքում: Համալրված տեղեկատվությունը հաջորդող ժամանակահատվածում տվյալների առկայության պարագայում ենթակա են ճշգրտման:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Հաշվառման դաշտի ամբողջականացման ապահովման նպատակով ռեստորանների ծառայությունների ոլորտում իրականացվում է չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատում:
	5.6 Կշիռների հաշվարկում	Քանի որ ծառայությունների ոլորտի վերաբերյալ հավաքվող տեղեկատվությունը ապահովում է այդ ոլորտի վիճակագրության ամբողջականությունը, հետևաբար լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն չի առաջանում:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Հաճախ, ելնելով օպերատիվ վիճակագրական տվյալների ստացման անհրաժեշտությունից, նախնական տեղեկատվության հիման վրա կատարվում է նախնական ցուցանիշների հաշվարկ, որոնք հետագայում ենթակա են ճշգրտման: Առաջին անգամ հրապարակված տվյալները որակավորվում են որպես նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:
	<i>Վերլուծություն</i>	
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	Ստացված ամփոփ տեղեկատվության հիման վրա իրականացվում է վիճակագրական ցուցանիշների խմբավորումների, ինդեքսների, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում: Ժամանակագրական համադրելիության առումով ըստ տեսակների ծառայությունների ծավալի ինդեքսները հաշվարկվում են ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով՝ հաշվետու ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, հաշվետու ամիսը նախորդ ամսվա

		<p>նկատմամբ, հաշվետու ժամանակաշրջանը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, հաշվետու եռամսյակը նախորդ տարվա համապատասխան եռամսյակի նկատմամբ, հաշվետու եռամսյակը նախորդ եռամսյակի նկատմամբ, հաշվետու կիսամյակը նախորդ տարվա համապատասխան կիսամյակի նկատմամբ, հաշվետու տարին նախորդ տարվա նկատմամբ: Ստացված ցուցանիշների հաշվարկը օգտագործվում է դինամիկ շարքերի կառուցման համար:</p>
	6.2 Արդյունքների վավերացում	<p>Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և վիճակագրական հաշվետվության ձևերի լրացման հրահանգների:</p> <p>Ելքային տվյալները համեմատվում են ինչպես նախորդ ամսվա (ժամանակաշրջանի) ցուցանիշների հետ, այնպես էլ նախորդ տարվա համապատասխան ամսվա (ժամանակաշրջանի) ցուցանիշների հետ: Իրականացվում է տվյալների միջև առկա տարբերությունների ուսումնասիրում:</p>
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	<p>Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով տնտեսությունում տեղի ունեցող տարաբնույթ երևույթների ազդեցությունը նշված ոլորտի վրա:</p>
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	<p>Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է՝ դրանց զերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի (տես՝ <a href="https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755">https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755</a> հղումը՝ Գլուխ 7, հոդված 23):</p>
	6.5 Արդյունքների վերջնականացում	<p>Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումն իրականացվում է ծառայությունների ոլորտի վերաբերյալ ամփոփ ցուցանիշների վերլուծություն՝ ըստ դրանց դինամիկ շարքերի, ինչպես նաև ըստ ձևավորման աղբյուրների այլ տեսակների համապատասխան ցուցանիշների հետ համեմատության միջոցով:</p>
	<i>Տարածում</i>	
	7.1 Ելքային համակարգերի	<p>Համացանցում տեղադրված «Ժամանակագրական շարքեր» ամեն ամիս թարմացվում են՝ տեղադրելով</p>

	արդիականացում	տվյալ ամսվա ծառայությունների ոլորտի վերաբերյալ ցուցանիշները: Նմանատիպ ձևով յուրաքանչյուր տարի թարմացվում են «Armstat.Bank»-ում (տես՝ <a href="http://armstatbank.am">http://armstatbank.am</a> հղումը) տեղադրված ծառայությունների ոլորտի ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և ք.Երևանի:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	<p>Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի, վիճակագրական ժողովածուների, տեղեկատվական ամսական գեկույցների միջոցով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=586">https://www.armstat.am/am/?nid=586</a> հղումը):</li> <li>2. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=80&amp;id=2203">https://www.armstat.am/am/?nid=80&amp;id=2203</a> հղումը):</li> <li>3. Հայաստանը թվերով (տարեկան) (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=80&amp;id=2219">https://www.armstat.am/am/?nid=80&amp;id=2219</a> հղումը):</li> <li>4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (ամսական) (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=82">https://www.armstat.am/am/?nid=82</a> հղումը)</li> </ol>
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի,

		Ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չհրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
	<i>Գնահատում</i>	
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	Ըստ անհրաժեշտության իրականացվում է միննույն աղբյուրից և/կամ համապատասխան կազմակերպությունների վերաբերյալ վարչական ռեզիստրներից ստացվող տեղեկատվության հավաքում՝ համեմատություններ իրականացնելու նպատակով:
	8.2 Գնահատման իրականացում	Վիճակագրական ցուցանիշների որակի կառավարման տեսանկյունից իրականացվում են միննույն աղբյուրից ստացվող, տարբեր հաշվետվության ձևերում արտացոլված միննույն կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության համեմատություններ: Տեղեկատվության որակի գնահատման համար տեղեկատվական հիմք են հանդիսանում նաև վարչական ռեզիստրների կողմից տրամադրվող համապատասխան տեղեկատվությունը:
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	Համեմատվող միննույն ցուցանիշի վերաբերյալ, տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում իրականացվում է դրանց հնարավոր պատճառների բացահայտում, որի հիման վրա իրականացվում են համապատասխան վերջնական ճշգրտման աշխատանքներ: